ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20-1

ք. Երևան «     » հունիսի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արտյոմ Խանդանյանի, որը գործում է «Արպանիվ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Մատակարար», մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով N ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20-1 ծածկագրով առ 06.04.2026 թվականի պայմանագրի 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1. Կողմերը սահմանեցին և հաստատեցին Պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված «Վճարման ժամանակացույց»-ը նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:
1.2. Ապրանքների մատակարարումն իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պահանջի հիման վրա:
1.3. Մատակարարման հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Վ. Տերյան 1-ին փողոց, 13 շենք (ոստիկանության նախկին հոսպիտալ):

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը և դրա N 1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4. Պատվիրատուն պարտավորվում է վճարումներ իրականացնել բացառապես փաստացի մատակարարված և ընդունված ապրանքների դիմաց՝ համապատասխան հանձնման-ընդունման ակտերի և հաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

2.5. Կողմերը համաձայնվում են, որ Պայմանագրով նախատեսված ապրանքների ընդհանուր արժեքը հանդիսանում է առավելագույն (սահմանային) և ենթակա չէ պարտադիր ամբողջական կատարման, իսկ վճարումները ենթակա են իրականացման միայն փաստացի մատակարարված ապրանքների ծավալի շրջանակներում:

2.6. Այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանի (ներառյալ՝ պայմանագրի գործողության ամբողջ ժամկետը) արդյունքներով ապրանքների փաստացի մատակարարված ծավալը պակաս է Պայմանագրով նախատեսված ծավալից, ապա չմատակարարված ապրանքների մասով Պատվիրատուն որևէ վճարային պարտավորություն չի կրում:

2.7. Սույն համաձայնագրով Կողմերը հաստատում են, որ ապրանքների չմատակարարված մասով պարտավորությունները դադարում են իրավունքի

ուժով՝ առանց լրացուցիչ համաձայնագրի կամ այլ իրավական ակտի կնքման անհրաժեշտության, և այդ մասով Պայմանագիրը համարվում է դադարեցված (լուծարված):

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ
ք. Գյումրի, Մազմանյան 3բ
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570078724667200
ՀՎՀՀ 05500411

Տնօրեն՝ Սահակ Հակոբյան

Ստորագրող
ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
3711840906
2026-06-04 12:47:33 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

---

/ստորագրություն/

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**

«Արպանիվ» ՍՊԸ
ք. Երևան, Նար-Դոսի 122
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022326481001
ՀՎՀՀ 09209297

Տնօրեն՝ Արտյոմ Խանդանյան

Ստորագրող
ԱՐՏՅՈՄ ԽԱՆԴԱՆՅԱՆ
1801720134
2026-06-04 12:13:38 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

---

/ստորագրություն/

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժին | Ապրանքի անվանում | Միավոր գին (ՀՀ դրամ) | Ուժի մեջ դրվող քանակ | Ուժի մեջ դրվող արժեք (ՀՀ դրամ) | Մատակարարման ժամկետը | Վճարումը |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | Ամառային անվադող 235/65/16C | 23,571 | 8 հատ | 188,568 | Համաձայնագրի մեջ ուժի մտնելուց 20 օրացույցային օրվա | Վճարումն իրականացվում է մատակարարված և ընդունված ապրանքների դիմաց՝ համապատասխան հանձնման-ընդունման ակտի և հաշվարկային փաստաթղթերի ներկայացումից հետո՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում» |
| 12 | Ամառային անվադող 225/75/16C | 24,000 | 32 հատ | 768,000 | Համաձայնագրի մեջ ուժի մտնելուց 20 օրացույցային օրվա | Վճարումն իրականացվում է մատակարարված և ընդունված ապրանքների դիմաց՝ համապատասխան հանձնման-ընդունման ակտի և հաշվարկային փաստաթղթերի ներկայացումից հետո՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում» |

Ընդամենը ուժի մեջ դրվող արժեքը՝ 956,568 ՀՀ դրամ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ
ք. Գյումրի, Մազմանյան 3բ
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570078724667200
ՀՎՀՀ 05500411

Տնօրեն՝ Սահակ Հակոբյան

Ստորագրող
ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
3711840906

2026-06-04 12:49:08 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

/ստորագրություն/

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**

«Արպանիվ» ՍՊԸ
ք. Երևան, Նար-Դոսի 122
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022326481001
ՀՎՀՀ 09209297

Տնօրեն՝ Արտյոմ Խանդանյան

Ստորագրող
ԱՐՏՅՈՄ ԽԱՆԴԱՆՅԱՆ
1801720134

2026-06-04 12:14:11 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

/ստորագրություն/